ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ

Նպատակ

Բերդ քաղաքը կարիք ունի մի վայրի, որը երեխաների համար երջանիկ մանկություն կապահովի: Բերդում մանկապարտեզ հաճախող երեխաներն անց են կացնում իրենց խաղաժամանակը շենքի ներսում, մինչ իրենց ընտանիքները աղքատության դեմ պայքար են մղում: Խաղահրապարակ կառուցելը երեխաների համար բացօթյա ապահով տարածք կհանդիսանա, որտեղ նրանք կարող են մարզվել, զարգացնել միտքը և զվարճանալ:

Գործողություններ

- Կառուցել խաղահրապարակ N:4 մանկապարտեզում:

Ծրագրի նկարագրությունը և նախապատմությունը

Խաղահրապարակի ծրագրի նպատակն է Բերդ քաղաքի մանկապարտեզներից մեկում երեխաներին բացօթյա ապահով տարածք տրամադրել խաղալու և ժամանցի համար: Երկուսից վեց տարեկան երեխաներն իրենց խաղաժամանակն անց են կացնում ներսում՝ իրենց դասասենյակներում: Կարևոր է, որ նրանք իրենց ժամանակը անց կացնեն դրսում, որպեսզի մարզվեն, զարգացնեն միտքը և զվարճանան:

Բերդ քաղաքում ապրող մարդիկ ջանում են կյանքի բարձր ստանդարտ ապահովել իրենց ընտանիքների համար: Այս ծրագրի իրականացման շնորհիվ 122 երեխա կկարողանա խաղալ դրսում: Այս դպրոցն օգնության կարիք ունի երեխաներին երջանիկ մանկություն պարգևելու հարցում, մանկություն, որտեղ նրանք կկարողանան գործի դնել իրենց երևակայությունը և հաճույք ստանալ երեխա լինելուց: Ասացեք Այո խաղաժամանակին, ասացեք Այո երջանկությանը:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Խաղահրապարակ	1	$4,600

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$4,600**